

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռս վերջերս տեղեկացավ Միացյալ Նահանգաց Հոլիվուդի շրջանի հայ եկեղեցու նոր հերձումի մասին, որ ուղղակի հետևանք է այն բաժանարար ձգտումների, որոնք սկիզբ առան 1956 թվականին, որով և սփյուռքի Հայաստանյայց եկեղեցին ու ժողովուրդը ահա տասնհինգ տարիներից ի վեր կանգնած են հոգևոր ու ազգային մի ողբերգության առջև:

Սփյուռքահայ կյանքի համար այս բախտորոշ ժամանակաշրջանում, երբ հրամայական պահանջ է հանդիսանում շուտափույթ կերպով վերահաստատել մեր եկեղեցու ներքին միությունը, որպեսզի նա միասնական ուժերով առավել արդյունավետությամբ կատարի իր քրիստոնեական առաքելությունը և հայապահպանման նվիրական գործը, Ամենայն Հայոց Հայրապետը հայրական սիրով վերստին հորդորում է բոլոր հին ու նոր բաժանյալ Իր զավակներին՝ գալու-միանալու մեր եկեղեցու ամբողջին՝ օրհնության ներքև Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի, որը հանդիսանում է դարերի պատմության փորձով նվիրագործված հայ եկեղեցու միության, նրա նվիրապետության անբաժան մեկության և համայն հայության ազգային միասնության միակ հնարավոր խարիսխը և երաշխիքը:

Ամենայն Հայոց Հայրապետը այս ոգով Իր խոսքն է ուղղել Տանն Կիլիկիո Գահակալին 9 հոկտեմբեր 1972 թվակիր Իր նամակով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

10-ը հոկտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին